



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
Պատվիրակություն Հայաստանում  
Քաղաքական, տնտեսական, մամուլի և տեղեկատվության բաժին

Երևան, հունիսի 8, 2016թ.

**Եվրոպական միության կողմից հատկացվում է 3.75 մլն եվրո օժանդակություն  
Հայաստանի Մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումներին՝  
երիտասարդների համար կրթական և աշխատանքային նոր հնարավորությունների  
խթանման հեռանկարով**

*2016 թվականի ապրիլին Եվրոպական միությունը փոխանցեց Հայաստանի ՄԿՈԻ ոլորտի կարողությունների զարգացմանն ուղղված ֆինանսական օժանդակության 3.75 մլն եվրո եզրափակիչ հատկացումը: Վճարումը բխում է 2012թվականի Արևելյան գործընկերության ինտեգրման և համագործակցության ծրագրով հատկացված 6մլն եվրո ընդհանուր բյուջեից՝ 5 մլն եվրո բյուջետային աջակցության ֆինանսավորում և 1 մլն եվրո տեխնիկական աջակցության միջոցներ: Ծրագիրը միտված է երիտասարդների համար նոր հորիզոնների բացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը, որի միջոցով հնարավոր կլինի նպաստել երիտասարդ սերնդի առավել մասնակցությանն ու ներգրավմանը տեղական զարգացման գործընթացներում, զսպելով աշխատանքային միգրացիան դեպի քաղաքային կետրոններ և նպաստել աղքատության հաղթահարմանը մարզերում և երկրի ողջ տարածքում:*

Աջակցության արդյունքում ակնկալվում է իրականացնել ՄԿՈԻ ոլորտի բարեփոխումներ երկրի ողջ տարածքում, ապահովել ՄԿՈԻ որակյալ կրթության համաչափ մատչելիություն հատուկ կարիքներ ունեցող երիտասարդների համար, սահմանել ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը և վերանայել ՄԿՈԻ մասնագիտությունների ցանկը՝ արագ զարգացող աշխատաշուկայի կարիքները բավարարելու նպատակով:

2016 թվականի դրությամբ՝ ՀՀ բոլոր մարզերի և Երևանի 17 պիլոտային քուլեջների գրեթե 4500 ուսանողներ դարձան ԵՄ աջակցությամբ իրականացվող բարեփոխումների շահառուներ, որոնք թիվը ավելանալու է մոտ ապագայում:

Մեկնաբանելով ՄԿՈԻ ոլորտում ԵՄ աջակցության ձեռք բերված արդյունքները՝ ծրագրի շահառու, Երևանի թիվ 2 տարածաշրջանային քուլեջի շրջանավարտ Թեհմինե Սահակյանն ասաց. «Քուլեջում ստացած գիտելիքներն ու հմտությունները, օգնեցին ինձ ստանալ բարձրագույն կրթություն Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Դրանք մեծգպես նպաստեցին իմ հետագա ձեռքբերումներին և կարիերայի աճին: Ներկայումս, ես աշխատում եմ Հայաստանի առաջատար ապահովագրական ընկերություններից մեկում, որպես մարկետինգի մասնագետ և գործակալ: Բոլոր նրանց ուլքեր դեռևս չեն կողմնորոշվել իրենց ապագա

Հասցե՝ Ֆրիկի 21, 0002, Երևան, Հայաստան  
Այցելուների համար մուտքը Պոռոջյան փողոցից  
Հեռ.՝ (374 10) 54 64 94, ֆաքս՝ (374 10) 54 64 95  
[Delegation-Armenia@eeas.europa.eu](mailto:Delegation-Armenia@eeas.europa.eu)  
[http://eeas.europa.eu/delegations/armenia/index\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/index_en.htm)

մասնագիտության հարցում՝ առաջարկում եմ ընտրել ՄԿՈԻ ոլորտը, որպես հետագա կարիերայի զարգացման կայուն հիմք»:

«ՄԿՈԻ ոլորտը երիտասադներին ընձեռում է մի շարք հնարավորություններ: ՄԿՈԻ մասնագիտությունների, կրթական ծրագրերի և ուսումնական պլանների կարողությունների զարգացմանը միտված պետական կրթական չափանիշները մշակվում զբաղվածության ներկա պահանջարկը բավարարելու սկզբունքով», իր հերթին նշեց ՄԿՈԻ զարգացման ազգային կենտրոնի տնօրեն Տաթևիկ Գասպարյանը:

Ծրագրի եզրափակիչ փուլի շրջանակներում, հատկապես սահմանամերձ շրջաններում գտնվող ՄԿՈԻ քոլեջները հիմնանորոգվել են և ամբողջովին վերազինվել, իսկ դրանցից երկուսը բարեկարգվել են՝ բավարարելու հաշմանդամ երեխաների կարիքները: Ծրագրի մեկ այլ կարևոր արդյունքներից է մեկն այն է, որ բոլոր տարածաշրջանային քոլեջներում մշակվել են եռամյա բիզնես պլաններ և կատարվել է տեղական շուկայի ուսումնասիրություն: ՄԿՈԻ հաստատությունների կայուն ֆինանսական կառավարման ենթատեքստում՝ բիզնես ծրագրերի մշակման աշխատանքները դրվատանքի են արժանացել քոլեջների ղեկավարների կողմից:

Աջակցության ծրագիրը ներառում է միջազգային լավագույն փորձի ու նորարարական գաղափարների կիրառում, ինչպես նաև ՄԿՈԻ կրթության համապատասխանեցում տեղի շուկայի կարիքներին:

\*\*\*\*\*

**ԵՄ-ն ի նպաստ Հայաստանի կրթության.** Վերջին 14 տարիների ընթացքում Եվրոպական միությունն ակտիվ օժանդակել է Հայաստանի կրթական ոլորտի բարեփոխումների իրականացմանը, հստակ թիրախ ունենալով ՄԿՈԻ ոլորտը:

2006 թվականին՝ Հայաստանի Եվրոպական հարևանության գործիքին միանալուց քիչ անց Հայաստանի կառավարության ու Եվրոպական հաձնաժողովի միջև համաձայնություն ձևեց բերվեց առ այն, որ Եվրոպական միության 2007թ և 2009թ բյուջետային աջակցության գործիքով նախատեսված 30 մլն եվրոն կենտրոնացվի ՄԿՈԻ ոլորտի բարեփոխումների խորացմանը: Ընդհանուր նպատակն էր աջակցել Հայաստանի կայուն զարգացմանը՝ ՄԿՈԻ ոլորտի որակի բարձրացման և այն աշխատաշուկայի կարիքներին հավասարեցնելու միջոցով:

Հետամուտ լինելով 2012 թվականի ԵՀՔ առաջընթացի զեկույցներին, Հայաստանին այս ծրագրով հատկացվեց 15մլն եվրո օժանդակություն, որից 6մլն եվրոն տրամադրվեց ՄԿՈԻ ոլորտի աջակցությանը:

ՀՀ կառավարության կողմից 2012 թվականի հուլիսին հաստատված 2012-2016 ՄԿՈԻ բարեփոխումների ծրագրով և աշխատանքային պլանով սահմանվել են բարեփոխումների հետևյալ հիմնական ուղղությունները. Հայաստանի Հանրապետության

մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի ինտեգրում եվրոպական մասնագիտական կրթության տարածքին; ՄԿՈԻ համակարգի կառավարման արդյունավետության բարձրացում, ՄԿՈԻ համակարգի հեղինակության բարձրացում և ՄԿՈԻ ոլորտի ներսում սոցիալական գործընկերության զարգացում և/կամ ամրապնդում:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության և հասարակական այլ գործընկերների կողմից:

ՄԿՈԻ թիրախային աջակցությունից բացի՝ ԵՄ-ն անշեղորեն աջակցում է Հայաստանի բարձրագույն կրթության կատարելագործմանը: «**Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի հզորացում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով**» 2014-2016 թվականների Թվինինգ ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի լիարժեք անդամակցությանը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին և կատարելագործել բարձրագույն կրթության որակը՝ ի շահ ուսանողների, շրջանավարտների և գործատուների:

Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ ֆինանսավորմամբ իրականացվող «**Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար**» ծրագրի նպատակն է ամրապնդել բարեվարքությունն ու պայքարել կոռուպցիայի դեմ Հայաստանի բարձրագույն կրթության հաստատություններում, խթանելով Հայաստանի կառավարության 2015-2018թթ հակա-կոռուպցիոն միջոցառումների ծրագրի արդյունավետ իրականացումը:

**Էրասմուս+ ծրագիրը** ԵՄ նոր ծրագիր է 2014-2020 թվականների համար՝ ուղղված կրթության, ուսուցման, երիտասարդության և սպորտի ոլորտներին: Այն ընդգրկում է յոթ ընթացիկ ծրագրեր, այդ թվում Տեմպուս և Էրասմուս Մուդուս ծրագրերը: Կարողությունների ամրապնդմանն ուղղված Տեմպուսի 21 ընթացիկ ծրագրերում և Էրասմուս+ 5 ծրագրերում ընդգրկված են 22 ՀՀ համալսարաններ և 31 այլ կազմակերպություններ՝ ներառյալ ընկերություններ, նախարարություններ և հասարակարան կազմակերպություններ: Էրասմուս Մունդուս 17 ընթացիկ ծրագրեր են իրականացվում է Հայաստանի ողջ տարածքում: 2004-2014 թվականների ընթացքում Հայաստանյան բոլոր ԲՈԻՀ-երի շուրջ 800 ուսանողներ և աշխատակիցներ մասնակցել են Էրասմուս Մունդուս ծրագրերի և Էրազմուս Մունդուսի մագիստրոսի միասնական աստիճան ծրագրերին:

Հավելյալ տեղեկությունների համար՝ [http://eeas.europa.eu/delegations/armenia/index\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/index_en.htm)  
Անահիտ Ազատյան, Մամուլի և տեղեկատվության պատասխանատու  
[Anahit.Azatyanyan@eeas.europa.eu](mailto:Anahit.Azatyanyan@eeas.europa.eu)  
+374 54 64 94 (լր. 803)

Հասցե՝ Ֆրիկի 21, 0002, Երևան, Հայաստան  
Այցելուների համար մուտքը Պոռչյան փողոցից  
Հեռ.՝ (374 10) 54 64 94, ֆաքս՝ (374 10) 54 64 95  
[Delegation-Armenia@eeas.europa.eu](mailto:Delegation-Armenia@eeas.europa.eu)  
[http://eeas.europa.eu/delegations/armenia/index\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/index_en.htm)